

Դավիթ Լոքյանի մասնակցությամբ Դիլիջանում մեկնարկել է ՀՀ համայնքների խորհրդաժողովը
08.12.2017

<http://mtad.am/hy/news/item/2017/12/08/mtad5203/>

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի մասնակցությամբ այսօր Դիլիջանում մեկնարկել է ՀՀ համայնքների խորհրդաժողովը: ՀՀ ՏԿԶ նախարարության և «Հայաստանի համայնքների միություն» ՀԿ-ի կողմից կազմակերպված երկօրյա խորհրդաժողովին մասնակցում են մարզպետներ, բազմաթիվ համայնքապետեր, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, «Քաղաքապետերի Դաշնագիր-Արևելք» ծրագրի, համայնքներում էներգաարդյունավետության, «Քաղաքապետերը՝ հանուն տնտեսական զարգացման» և այլ ծրագրերի ներկայացուցիչներ:



Ողջունելով արդեն ավանդական դարձած 6-րդ խորհրդաժողովի մասնակիցներին՝ նախարար Լոքյանը մատչել է արդյունավետ աշխատանք, նշել, որ այն լավ հնարավարություն է ոլորտում առկա խնդիրները բարձրաձայնելու և աստիճանաբար դրանք լուծելու համար: Ըստ նախարարի, այս համաժողովն իր կարևորությամբ ոգևորող և պարտավորեցնող է, քանի որ նրա օգնությամբ հնարավոր է առավել արդյունավետորեն նախանշել այն հիմնական ուղղությունները, որոնցով պետք է առաջնորդվեն համայնքները՝ ապահովելով բնակիչների համար լավագույն պայմաններ: «Տեղյակ եք երկրում ընթացող վարչատարածքային բարեփոխումներից, այսօր ունենք 52 խոշորացված համայնք: Այս անգամ մեր խորհրդաժողովը կարևորվում է, քանի որ մենք գտնվում ենք բարեփոխումների փուլում, որը ձեր և նախարարության պատասխանատուների շնորհիվ իրականացվում է առանց ցնցումների և կշարունակենք նաև 2018թ.-ին: Արդյունքում մենք

ձևավորելու ենք մի համակարգ, որի միջոցով ավելի հեշտ է լինելու համայնքի հետ աշխատանքը, տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը, համայնքների հետ ավելացված արժեք ստեղծելը, համայնքների բարեկեցության մասին մտածելը: Մենք մի շարք պարտավորություններ ունենք նաև տարբեր միջազգային կազմակերպությունների նկատմամբ, մասնավորապես, 2018-ին նախատեսվում է, որ մենք Եվրամիության ասոցացման համաձայնագրով լուրջ միջոցներ ենք ստանալու տարածքների տնտեսական զարգացման և տարածքների համաչափ զարգացման խնդիրները լուծելու համար: Բայց դրա համար մենք ունենք 3 հիմնական պարտավորություն՝ 1. կոնսոլիդացման, համախմբման աշխատանքների շարունակում, 2. ուշադրություն դարձնել համայնքների ֆիսկալ քաղաքականությանը, 3. ժողովրդավարություն, տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության ապահովում», -ասել է նախարարը:

Նախարարը խոսել է նաև տարածքային համաչափ զարգացման ուղղությամբ իրականացվող և նախատեսվող բարեփոխումների և ծրագրերի մասին և այս համատեքստում ևս մեկ անգամ ընդգծել է համաժողովի նշանակությունը, հենց համայնքի ղեկավարներից կառուցողական և արդյունավետ առաջարկներ ներկայացնելու կարևորությունը:

Նախարարը շնորհակալություն է հայտնել բոլոր այն կազմակերպություններին, մասնավորապես, Հայաստանի համայնքների միությանը, ՀՀ ԿԲ-ին, Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությանը, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակին, որոնք աջակցել են այս համաժողովի կազմակերպման և անցկացման աշխատանքներին:

Խորհրդաժողովի առաջին օրը համայնքների ղեկավարների հետ քննարկվել են մարզերում և համայնքներում տնտեսական զարգացմանը միտված տարբեր ծրագրերի ընթացքը և հնարավորությունները: Խորհրդաժողովի 2-րդ օրը քննարկումներ են ծավալվելու ՀՀ-ում իրականացվող վարչատարածքային բարեփոխումների ընթացքի մասին, ինչպես նաև անդրադարձ է կատարվելու համայնքներում տնտեսական զարգացման առկա միտումներին: Կենտրոնական բանկի ներկայացուցիչները ներկայացնելու են համայնքների զարգացման, ֆինանսական ներգրավվածության, ֆինանսավորման այլընտրանքային հնարավորությունների մասին:

Նախագահը մասնակցել է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններին նվիրված խորհրդաժողովին

09.12.2017

<http://www.president.am/hy/press-release/item/2017/12/09/President-Serzh-Sargsyan-attended-a-meeting-in-Dilijan/#prettyPhoto>

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր մասնակցել է տարածքային կառավարման և զարգացման նախարարության և «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության կողմից Դիլիջանում ղեկտեմբերի 8-9-ը անցկացվող տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններին նվիրված խորհրդաժողովի ամփոփիչ նիստին:



Խորհրդաժողովին մասնակցել են մարզպետներ, համայնքապետներ, կենտրոնական բանկի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, «Քաղաքապետների դաշնագիր-արևելք» ծրագրի, «Քաղաքապետները՝ հանուն տնտեսական զարգացման», համայնքներում էներգաարդյունավետության և այլ ծրագրերի ներկայացուցիչներ: Օրակարգի շրջանակներում քննարկվել են Հայաստանի տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման խնդիրները, անդրադարձ է կատարվել մարզերում ու համայնքներում տնտեսական զարգացմանը միտված ծրագրերին, Հանրապետությունում իրականացվող վարչատարածքային բարեփոխումների ընթացքին, համայնքների խոշորացման գործընթացին: Կենտրոնական բանկի ներկայացուցիչներն իրենց ելույթներում ներկայացրել են համայնքների զարգացման, ֆինանսական ներգրավվածության, ֆինանսավորման այլընտրանքային հնարավորությունները:

Տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանն ամփոփել է համայնքների խորհրդաժողովի արդյունքները, խոսել ոլորտի հիմնախնդիրների մասին, որից հետո խոշորացված մի շարք համայնքների ղեկավարներ ներկայացրել են գործունեության մեկ տարվա ձեռքբերումները, արձանագրված հաջողությունները, առկա խնդիրները և առաջարկվող լուծումները:

Նախագահ Սերժ Սարգսյանը խորհրդաժողովի ամփոփիչ նիստում հանդես է եկել ելույթով, պատասխանել միջոցառման մասնակիցներին հետաքրքրող հարցերին:

Դիլիջանում շարունակվում է ՀՀ համայնքների խորհրդաժողովը
09.12.2017

<http://mtad.am/hy/news/item/2017/12/09/mtad5896/>

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի, ՀՀ մարզպետների, համայնքապետների, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ Դիլիջանում շարունակվում է ՀՀ համայնքների խորհրդածողովը: Աշխատանքային երկրորդ օրը ներկայացվել է վարչատարածքային բարեփոխումներին, համայնքների խոշորացման ծրագրի ընթացքին, համայնքների տնտեսական զարգացման մեխանիզմներին վերաբերող հարցեր: Խորհրդածողովին մասնակցում են նաև Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, «Քաղաքապետերի Դաշնագիր-Արևելք» ծրագրի, համայնքներում էներգաարդյունավետության, «Քաղաքապետերը՝ հանուն տնտեսական զարգացման» և այլ ծրագրերի ներկայացուցիչներ:



Հ ՏԿԶ նախարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը ներկայացրել է Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների ընթացքը: «< Ներկայումս այդ բարեփոխումների արդյունքում ձևավորվել են 52 խոշորացված համայնք՝ 465 բնակավայրով: Առաջիկա տարիներին նախատեսվում է խոշորացնել ևս 450 համայնք: Խոշորացված համայնքներում ներդրվում են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ՝ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչն էականորեն բարձրացնում է համայնքային ծառայությունների մատուցման հասանելիությունն ու մատչելիությունը>>», -նշել է Վ. Տերտերյանը: Փոխնախարարը նաև տեղեկացրել է, որ ՀՀ ՏԿԶ նախարարի հանձնարականով նման գրասենյակներով կապահովվեն բոլոր խոշորացված համայնքները և արդեն իսկ երկուշաբթի օրը քաղաքացիների սպասարկման գրասենյակ կբացվի Նոյեմբերյան համայնքում: Վ. Տերտերյանի խոսքով, այս բարեփոխումների արդյունքում դրական ազդեցությունը համայնքային կյանքի վրա ակնառու է, մասնավորապես,

ընդլայնվել և բարելավվել են համայնքային ծառայությունները, բարձրացվել է կառավարման արդյունավետությունն ու հանրային մասնակցությունը, ապահովվել է կառավարման թափանցիկությունը, ավելացվել ֆինանսական ռեսուրսները: <<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ արդենիսկ մի շարք խոշորցված համայնքներում ծրագրեր են իրականացվում ենթակառուցվածքների զարգացման, տեխնիկական վերգինման, էներգախնայողության ծրագրերի իրականացման ուղղությամբ>>,-ամփոփել է փոխնախարար Տերտերյանը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի նախագահ Աշոտ Կիրակոսյանը խորհրդաժողովի մասնակիցներին ներկայացրել է հիմնադրամի միջոցով իրականացվող ծրագրերի ընթացքը: Նրա խոսքով, դրանք իրականացվում են ըստ ժամանակացույցի, և որոշ համայնքների ծրագրեր արդեն մտել են իրականացման փուլ: Խոսելով համայնքների տնտեսական զարգացման մեխանիզմների մասին՝ ՀՀ ՏԿԶ փոխնախարար Վարազդատ Կարապետյանը ներկայացրել է այս ոլորտում նախատեսվող բարեփոխումները, դրանց պոտենցիալ հնարավորությունները, անդրադարձել է հաջողված օրինակներին: <<Յուրաքանչյուր համայնք պետք է ունենա համայնքային տնտեսական զարգացման պատասխանատու, ով ծրագրեր պետք է ներկայացնի մարզի զարգացման հիմնադրամներ, որը նախատեսվում է ստեղծել 2018-ին>>,-իր խոսքում նշել է փոխնախարար Կարապետյանը:

Նախարարը, նախարարության պատասխանատուները պատասխանել են համայնքների ղեկավարների հարցերին, քննարկել բարձրացված խնդիրները: Խորհրդաժողովի ընթացքում ԿԲ ներկայացուցիչների կողմից ներկայացվել են համայնքների զարգացման ֆինանսավորման այլընտրանքային տարբերկներին վերաբերող հարցեր:

Համայնքները մեր երկրում կայացել են, սակայն անելիքներ դեռ շատ կան. Դավիթ Լոքյան
09.12.2017

<http://mtad.am/hy/news/item/2017/12/09/mtad582/>

Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ ընթացող ՀՀ համայնքների խորհրդաժողովի ժամանակ ՀՀ ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանն իր խորին շնորհակալությունն է հայտնել ՀՀ Նախագահին ՏԻՄ-երի նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար, ընդգծելով, որ Նախագահի հետ ունեցած յուրաքանչյուր հանդիպում ոգևորիչ ու պարտավորեցնող է ոլորտի պատասխանատուների համար: <<Պետք է փաստեն, որ համայնքները մեր երկրում կայացել են, առավել ևս կայացել են մեր տարածքային կառավարման մարմինները: Այս տարի երկրում ունեցել ենք համապետական և շուրջ 350 համայնքում ՏԻՄ ընտրություն, բայց այս ընտրական գործընթացները չեն խանգարել մեր համայնքների բնականոն գործունեությանը: Միայն նշեն, որ մեր 11 ամիսների հավաքագրումը համայնքներում ավելացել է ուղիղ 2 մլրդ դրամով: Դա առաջին հերթին համայնքի ղեկավարների գիտակցության բարձրացումն էր, երկրորդ՝ վարչարարությունը, երրորդ՝ խոշորացումը, որի արդյունքում համայնքային գույքը և հողը մտնում են գրանցման դաշտ: Առաջին անգամ կարողացել ենք հողի հարկի մասով շուրջ 250 մլն դրամի չափով ավել գումար հավաքագրել, քան 2016-ին: Շուրջ 1 մլրդ դրամի չափով գույքահարկի ավելացում ունենք, ավելացել են նաև տեղական տուրքերի և գույքի վարձակալության գումարները: Մա փաստում է, որ մեր համայնքերն իրենց մարդկային կապիտալով ունեն հնարավորություններ և առաջիկայում

Ձեր կողմից ուղենշված խնդիրները, պարոն Նախագահ, պետք է լուծումներ ստանան համայնքներում: Իրավամբ, մեր ամենացավոտ կողմերից մեկը բյուջեների ծախսային և մուտքային խնդիրներն են: Այս 6 ամիսների ընթացքում ՀՀ Տավուշի մարզում իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի թիվը 340-ից հասել է 1800-ի: Գեղարքունիքում 1920-ի, Սյունիքում՝ ավելին: Հանրապետությունում մոտ 15400 պայմանագիր է կնքված իրավաբանական անձանց հետ, և մենք այսօր հայտարարում ենք, որ 2018 թվականին գոնե 80 տոկոսի չափով աղբահանության և սանիտարական մաքրման վճարները պետք է իրականացվեն համայնքների սեփական եկամուտներից>>,- նշել է նախարարը:



Նախարարն իր ամփոփիչ ելույթում ՀՀ Նախագահին է ներկայացրել ոլորտին առնչվող մի շարք այլ խնդիրներ, նշել դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացվող միջոցառումները, ինչպես նաև նախատեսվող բարեփոխումների ծրագրերը: Նախարարը ևս մեկ անգամ շնորհակալություն է հայտնել Նախագահի կողմից ոլորտին ցուցաբերած ուշադրության համար և արձանագրել, որ համայնքներում բազմաթիվ խնդիրներ լուծումներ են ստացել հենց Նախագահի անմիջական և գործուն աջակցության շնորհիվ: